ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2017թ. N---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» հ.468-Ա որոշման հավելվածը լրացնել նոր 152-163 կետերով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» հ.468-Ա որոշման հավելվածի 148-րդ տողի 3-րդ սյունակի «Զ. Քանաքեռցու հ.32» բառերը փոխարինել «Հասրաթյան փողոց հ.17» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջները տարածվում են նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի առավել արդյունավետ կառավարման նպատակով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշմամբ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 151 շենքեր և շինությունները, դրանց զբաղեցրած ու սպասարկման համար ծառայող հողամասերը, անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվել են նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի նշված որոշման ընդունման պահին բացի թվով 151 գույքային միավորներից առկա են եղել նաև թվով 13 միավորներ, որոնց մասով իրականացվում էր չափագրման, հասցեավորման և իրավունքի ձևակերպման աշխատանքներ, ապա դրանք չէին ներառվել որոշման մեջ:

Ներկայումս նշված գործընթացը սահմանված կարգով ավարտվել է, ինչի պարագայում առաջարկվում է որոշման մեջ կատարել լրացում նաև այս տարածքների մասով:

Միաժամանակ, որոշման նախագծով նախատեսվում է նաև Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, ինչը պայմանավորված է «Երևանի հ.159 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի նկատմամբ ճշգրտված փոստային առաքումների հասցե տրամադրելու և նոր հասցեով վերագրանցում կատարելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի Հ.468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.468-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
,,____,, _____2017թ.
N_____-Ա Որոշման

Ցանկ		
Նախադպրոցական ուսումնական հաստատությունների		
Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը
152	«Երևանի հ.13 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Բաղրամյան 21 շենքի հ.87
153	«Երևանի հ.40 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հալաբյան փողոց հ.33/1
154	«Երևանի հ.43 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ֆուչիկի փողոց, 2-րդ նրբանցք հ.9
155	«Երևանի հ.48 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Նորաշեն թաղամաս հ.34/1
156	«Երևանի հ.79 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Շերամի փողոց հ.65/2
157	«Երևանի հ.129 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հ.Հովսեփյան փողոց հ.17
158	«Երևանի հ.132 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հ.Հովսեփյան փողոց հ.3
159	«Երևանի հ.138 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ղարիբջանյան փողոց հ.104
160	«Երևանի հ.140 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հ.Հովհաննիսյան փողոց 2/2
161	«Երևանի հ.142 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Շիրակի 4 նրբանցք հ.5/1
162	«Երևանի հ.145 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Շիրակի 5 նրբանցք հ.27/4
163	«Երևանի հ.131 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Նորագավիթ 1-ին փողոց հ.95/6